ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80,
կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№E/13/2370-21 առ "08" 09 2021թ.

«ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ տնօրեն
պրն Ա.Համբարձումյանին

(ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207պայմանագրի
միակողմանի լուծման վերաբերյալ)

***Հարգելի՛ պարոն* Համբարձումյան,**

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար «**Գործիքային հատուկ հարմարանքներ**» ապրանքների (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ հունիսի 15-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. հուլիսի 28-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 14.949.000 (տասնչորս միլիոն ինը հարյուր քառասունինը հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով նախատեսված 2 հատ խողովակահատիչները «ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ պայմանագրի

- 2.4.1 կետի՝ «Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»,
- 2.4.2 կետի՝ «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում»,
- 2.4.4 կետի՝ «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով»,
- Հավելված №1-ի՝ «Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում»:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը, այն է՝ գնորդը իրավունք ունի՝

- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի;
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը;
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ՆՈՎԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հետ 2021թ. հուլիսի 28-ին կնքած №ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-116/21-01/207 պայմանագիրը:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքների մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն Է/13/2342-21 առ 02.09.2021թ գրությամբ տեղեկացրել է մատակարարման ժամկետների խախտման դեպքում պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց.
ԳԲ առաջատար ճարտարագետ՝
Մ.Կարապետյան
Հեռ. 010-28-29-60, 33-08